ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 2 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Մ. Թոփուզյանի

Քննության առնելով «Մելտեքս» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը քննության ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. «Մելտեքս» ՍՊԸ-ն 15.02.2011թ. դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «ՀՀ Սահմանադրության 18, 19, 101-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածն այնքանով, որքանով «նոր հանգամանքներով» դատական ակտի վերանայման վարույթի վրա տարածվում են ՀՀ քաղաքացաիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնները, այդ թվում՝ բողոքը մերժելը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ»:

3.Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետեւյալին.

Դիմողի կարծիքով՝ սույն գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթով նախատեսված իրավակարգավորումը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներին եւ իրավական դիրքորոշումներին, ՀՀ Սահմանադրության 18, 19, 101-րդ հոդվածներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի դրույթները հավասարապես վերաբերում են ինչպես «նոր երեւան եկած հանգամանքներին», այնպես էլ՝ «նոր հանգամանքներին»: Դիմողի կարծիքով՝ «նոր երեւան եկած հանգամանքի» պարագայում Սահմանադրության տեսանկյունից իրավաչափ է դատական ակտը վերանայող դատարանին լիազորել, որպեսզի վերջինս նոր երեւան եկած հանգամանքի հիմքով վերանայման վարույթ հարուցելու որոշում կայացնելուց հետո՝ վերանայման արդյունքում գտնի, որ դատական ակտը պետք է թողնել ուժի մեջ, իսկ բողոքը՝ մերժել: Իսկ «նոր հանգամանքի» պարագայում նշված իրավակարգավորումը դատարաններին հնարավորություն տալով նախորդ դատական ակտն ուժի մեջ թողնել, հնարավորություն չի ստեղծում կատարել ինչպես ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը, այնպես էլ ՄԻԵԴ-ի վճիռը, քանի որ իրավունքի խախտման փաստը հնարավոր է միայն դատական ակտը բեկանելու եւ նոր հանգամանքին համապատասխան ներկայացված պահանջով բողոքի բավարարման դեպքում:

4. Դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ չկան «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածներով կարգավորվող՝ անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. «Մելտեքս» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել քննության:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

2 մարտի 2011 թվականի
ՍԴԿՈ/2-3